40. ԱՆԴԱՄԱԼՈՒԾ

Կէղնի, չէղնի թագավորըմ ու ուրեն լե ախչիկըմ։ Էդ ախչիկ թավաթուր խորոտկութենի տեր կէղնի։ Որն օր կիգա կուզե, հեր չի տա։ Կասե.—Ջուր իմ ախչկա պես խորոտիկ տղե մը հ'ըռաստ չիգա, զիմ ախչիկ չպիտի կարգիմ։ Ես ու մեկ ախչիկ իմ, հըմալ տակմա հալով իմ տնեն դուրս չըմ հանի զիմ ախչիկ։

Ավուրըմ մեկ էդ թագավոր կէղնի օլըրտի։ Կէրթա կտեսնա օր անդամալուծըմ հ'ընկուկ է փողոց, շներ թափեր ին վրեն։ Մեկ զթև կխածնե, մեկ զօտկ, ձեռք լե չկա, օր զարկե հեռեցու։

Կվերցու զէդ անդամալուծ, կառնե, կիգա տուն։ Կասե.—Վալայի, ես պիտի տանիմ զէդա ֆուխարեն պահիմ, քանի օր ավլադ ու թավլադ լե չունիմ, մեկ ախչկաց զատ։ Հըմ իմ հոգուն խեր է, հըմ իմ մարմնուն։

Կվերցու, կառնե կիգա ուր տուն։

Կբերե տուն, համամլամիշ կէնե, ձեռկըմ աղեկ հալավ կկտրե, հ'օդե մը կիտա ուրեն, կթալե յորղան-ղոշակ, կտանե դնե վրեն։

Ըստ հաղ գինաս պահե՞լ էր, օր կպահեր։ Թագավոր հ'ըմնօր կիգեր, զուր ձեռք կդներ անդամալուծի գլխու տակ, կնիկ լե կբերեր հաց, մեկ-մեկ բրդուճ ու կդներ բերան։ Սալթ մեղրով ու եղով կպահեն, հ'ուր օր անուշ ու չանուշ մը կեր, զէն կիտեն ուտեր։

Ավուրըմ մեկ էդ թագավորն ու ուր նազիր-վազիր հ'ելան գացին օլըրտելու։ Գացին տեխըմ, տեսան օր հալվորըմ նստուկ է տիխիրեմ թուղթ կա հ'առեջ, կգրե ու կթափե։

Թագավորն ուր նազիր-վազիրին ասեց.— Հարցու տեսնաք էդա հալ-
-վորուց, զէդ թղթեր հ՝որի՞ կդրե ու կթալե։ Ափսո՞ս չին էդ թղթեր։

Նազիր-վազիրն հարցուց։

Ասեց.— Ես իմա՞լ էնիմ, ընծիկ հըմալ ին ամր էրած։

Նազիր-վազիր մոտեցավ էդ հալվորուն, օր տեսնա ի՞նչ է կգրե։ Իշ-
քեց, տեսավ օր գրեց. «Թագավորի ախչիկ անդամալուծի գլուխ»։

Վազիր-նազիրն ասեց.— Ջանըմ, էդի ի՞նչ է կգրիս։ Իմա՞լ թագա-
վորի ախչիկ կէղնի անդամալուծի գլուխ։ Էդի հինչ կէղնի, ավիրե։

Հալվորն ասեց.— Ես իմա՞լ էնիմ, ընծիկ հըմալ ին ասած, ես լե
հըմալ կգրիմ։

Թագավորն տեսավ, օր նազիր-վազիրն ու հալվոր զիրար կտավըշ-
տին։ Ասեց.— Հ՝որի՞ զիրար կտավըշտիք։

Վազիր-նազիրն ասեց.— Թագավոր ապրած, գրեր է. «Թագավորի
ախչիկ անդամալուծի գլուխ»։ Էդ բան իմա՞լ կէղնի։

Թագավորն ասեց նազիր-վազիրն.— Ասա ուրեն թըղ ավիրե, ուրի-
շըմ գրե։

Նազիր-վազիրն ասեց հալվորին.—Թագավոր կասե՝ թըղ ավիրե,
ուրիշըմ գրե, էդ բան անկարելի է, չէղնի։

Հալվորն ասեց.— Նազիր-վեզիր, էն օր գրվավ, էլ չավիրե։

Հերսեն թագավորն ու նազիր-վազիր թորկին էկան։

Թագավոր ղաոցավ էկավ, զուր մաճլիսներ կանչեց, բերեց, պատ-
մեց զուրանց գլխու գալած։ Ասեց.—Իմա՞լ էնիք, իմա՞լ չէնիք։

Մեկըմ էնդիեն թռավ ասեց.— Թագավոր, էդոր չարեն մեկ բան է՝
իգին իտաս, զէդ մարդ տանին կորցուն։

Թագավորն ասեց.— Էդ անկարելի բան է, իմ ձեռք չէրթա, թասլիմ
էնիմ, տանին սպանին։ Հար հ՝էսօր մենք մըր բերնեն կտրեր ինք, տվեր
ինք անդամալուծն է կերի, ճար ու ճամբախըմ կա՝ ցուցուցեք։

Էնդիեն մեկ ուրիշ մաճլիսըմ լե թռավ, ասեց.— Թագավոր ապրած,
էդի անդամալուծըմ է, ուր հալի հետ։ Ի կապինք վըր ձիուն, թորկինք
թըղ էրթա Ճգնավորներու սար։ Հալբաթ ճգնավորըմ հ՝ռաստ կիգա,
կբռնե, կտանե պահե, քու յախեն լե կազատի, քու ախչկան լե։

Թագավորն ասեց.— Տես, էդա շատ աղեկ ասեց։

Հ՝ելավ բերեց նաճար, տվեց մաֆե մի շինել, անդամալուծն գրեց
մեջ, ուրեն կորա լե հալավ, հաց ու շուր կապեց վըր ձիուն, տվեց տղի
մը ձեռք։ Ասեց.— Կքաշիս, տանիս Ճգնավորի սար, կթողիս էնտեխ ու
կիգաս։

Տղեն է, քաշեց զանդամալուծի ձիու գլուխն ու առավ գնաց Ճգնա-
վորի սար, թողեց ու էկավ։

Տղեն օր թորկեց էկավ, ձին տվեց զճամբախ ուր հ՝առեշն ու գնաց։

Զին թող էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք վրը ճգնավորին։

Ճգնավորն է, հ՝ելավ օր ուրեն խաղող բերեր ուտեր, տեսավ օր էդ օր ուրիշ էրկու ճութ խաղող ին բերած, զարմացավ։ Ասեց.—Ջանըմ, ուրիշ օր ընծիկ մեկ ճութ խաղող կբերին, հ՝էսօր էրկու ճութ ին բերած։ էդ ի՞նչ պիտի էղնի։

Էրկմտավ ուր մտկի մեջ։

Աստծու հրեշտակն հ՝իջավ, ասեց.— Ճգնավոր, հ՝որի՞ կերկմտիս, հ՝էսօր քզիկ բարի խոնախըմ պիտի հ՝իգա։

Ճգնավորն ասեց.— Խոնախն օր կա, աստծու խոնախն է, թող հ՝իգա։

Հրեշտակ թողեց գնաց։

Զին է, քշեց էկավ ճգնավորի հ՝էրի դուռ կանավ։ Անդամալուծն բռաց, ասեց.— Բարև քզիկ, ճգնավոր։

Ճգնավոր ձեն չհանեց, վրը ուր աղոթկին էր։ Աղոթկն օր խըլըսավ, էկավ ասեց՝ աստծու բարին, հ՝իշուց զմաֆեն, առավ զտղեն գնաց ուր հ՝էր։

Հ՝իրկուն օր էղավ, կերան-խմեցին, ճգնավորն հարցուց անդամալուծից.

— Դու ի՞նչ մարդ իս։

Ասեց.— Ես անդամալուծըմ ենք, հ՝ընկուկ ինք փողոց։ Օրըմ լե տեսնամ թագավոր կընցներ, տեսավ զիս, վերցուց տարավ ուր տուն, հինգ-վեց տարի պահեց զիս։ Օրըմ լե տեսնամ, բերին զիս գրին էդա մաֆի վրեն, մաֆեն կապեցին վրը ձիուն, տվին տղի մը ձեռք, քաշեց բերեց զիս էդա սար, թորկեց ու գնաց։

Անդամալուծն է, չորս հինգ շաբաթ մնաց էդտեխ։ Ավուրըմ մեկ լե ճգնավոր քնուկ էր, գիշերն հրեշտակն աստծուն հ՝երաղ էկավ ճգնավորին։ Ասեց.— Ճգնավոր, վաղ կշալակիս զանդամալուծն, կառնիս կէրթաս ֆլան քարի տակ հ՝ախբուրըմ կա, կլողկրցուս, կէղնի տասնուհինգ տարեկան տղե մը, կառնես կիգաս։

Ճգնավորն հ՝իմցավ, հ՝ելավ նստավ, ասեց.— Ջանըմ, էդի լըրջուց է, հ՝երաղ է։ Իմ թախմընով էդ տեխրանք իմ տեխրանք ին, հ՝ախբուր հ՝ուստե՞ էդ քարու տակ։

Մեկ լե պառկավ, քնավ։ Հրեշտակն էկավ հ՝երաղ, ասեց.—Ջանըմ, ես ինչ օր կասեմ քզիկ, դու զիմ խոսք էրե։ Կելնիս լուտուն, կառնիս զանգամալուծն, կտանիս ֆլան քաբու տակ հ՝ախբուրըմ կա, կլողկցուս, կէղնի տըսնուհինգ տարեկան ջահելըմ, կառնիս կիգաս։

Ճգնավոր հ՝իմցավ.— Ջանըմ,— ասեց,—էդ ի՞նչ պիտի էղնի։ Իմ թախմընով հ՝օրեն հազար հեղ կէրթամ լըմփամ էդ տեխ ու հ՝իգամ։ Ես գինամ էդ քարու տակ հ՝ախբուր չկա, հըմկա հ՝ուստե՞ն հ՝ախբուր ծլավ հ՝ոդի։

Մեկ լե պառկավ, քնավ։ Հրեշտակն էկավ հ՝երազ։ Ասեց.—Ճգնավոր, ջանըմ, դու հ՝որի՞ն կտարակուսիս։ Աստծու մոտ շատ չաթին բա՞ն է էդի, քզիկ ինչ օր կասեմ, էն էրե։ Կելնիս լուսուն, կառնիս անդամալուծն, կէրթաս էն քարու տակ, հ՝ախբրի մեջ կլողկըցուս, կառնիս կիգաս։ Հ՝ախբրի մեջ ինչ խըդար անգին քար, օսկի ու արծաթ լե կա, կժողվիս, կըլնաս անդամալուծի հակուբեն, առնե ուր հետ, էրթա։

Ճգնավորն է, հ՝ելավ լուսուն, շալկեց զանդամալուծն ու գնաց էդ քարու տակ։ Տեսավ օր հ՝ախբուրըմ կթալե, օսկու պես կճըրըստա։ Հանեց զանդամալուծի հալվըներ, մտուց ջրի մեջ, լողկըցուց, էղավ տրսնուհինգ տարեկան տղե մը, ծամեր զուր օսկի։ Ժողվեց հ՝ախբրի միջու անգին քարերն ու օսկի արծրթներ, լըցեց հ՝ակուբի մեջ, առավ ուր հետ, էկավ ուր խուց։

Էրկու-իրեկ օր լե հոդ մանցին։

Տղենն ասեց.— Ես ճամբախ չըմ գինա, իմա՞լ էրթամ, վախենամ մոլրիմ։

Ճգնավորն ասեց.— Մը վախենա, չըս մոլրի, փառք աստծու, քզիկ օտկ լե կա, ձեռք լե, կհեռեցում զքզիկ, կհանիմ ճամբու վրեն, բռնե զճամբախ ու գնա։ Կէրթաս ինչ գեղի օր հ՝ըռաստ էկար, քզիկ մշակըմ լե կբռնիս, կառնիս քու հետ կէրթաս։

Պառկան քնան, հ՝ելան լուսուն։ Տղեն հեծավ զուր ձին, ճգնավորն հ՝ընկավ տղի հ՝առեջ, բերեց դրեց ճամբու ու բարմնաց էղավ ու դառցավ էկավ ուր խուց։

Տղեն է, էկավ գեղըմ էղավ մսաֆըր։ Հ՝իրկուն ուրեն մշակըմ լե բռնեց, հ՝ելան լուսուն հ՝ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, գացին քաղաքըմ հ՝ելան դուրս։

Մութ տվեց վրե ուրանց։ Հ՝ու՞ր էրթաք, հ՝ու՞ր չէրթանք։

— Էրթանք բազչի տակ, զմբր չատբր զարկենք,—ասեց մշակ։

Գացին, բազչի մը տակ զուրանց չատր զարկին։ Դու մ՝ ասի, էդի թագավորի խաս բաղչեն է էղի։

Լուսուն թագավոր հ՝ելավ քնուց, տեսավ օր ուր բազչի տակ չատբրըմ կա զարկուկ։ Ճամբեց զվազիր-նազիրն ասեց.— Գնա՛ տես, էդա ի՞նչ չատր է իմ բազչի հ՝առեջ զարկուկ է։

Վազիրն էկավ տեսավ օր տալու-խանդի տղե մը կա, էդ չատրի դուռ կանուկ։ Ասեց.—Տղա՛, էդ ի՞նչ չատր է, հ՝որի՞ն եք էկի հ՝ոգի զարկի։

Տղենն ասեց.— Իմ աղի չատրն է, հ՝իրկուն էկանք կընցնենք, մութ տվեց վրե մի, զարկինք։ Լուսուն հ՝ելնենք էրթանք։

— Քու աղեն ո՞րն է,— ասեց վազիր-նազիրն։

Տղեն ասեց.— Ես լե չըմ գինա որն է, զիս լե ճամբու հետն է վարձի առի ու էկի։

— Հ'ու՞ր է քու աղեն։

— Ներս քնուկ է։

Նազիր-վազիր չատրի ծրկով օր իշքեց զտղեն, տեսավ օր օսկու պես լուս կիտա։ Օսկի ծամեր վըր գլխուն, հուրնիկ-հրեղեն տղե մը պառկուկ տեխի մեջ, ուր մտկով ասեց. «Թագավորի ախչկա խարճ օր կա՝ էդա տղեն էր»։

Էկավ թագավորին ասեց.— Թագավոր ապրած, տղե մ՝ օր ուր հ'երսեն լուս կցողա, ասըլ քու ախչկա խարճն է։

Թագավոր ասեց.—Մշկուն խաբար տվեք, օր հ'ելավ՝ թըղ ասե՝ զքզիկ թագավոր կկանչե, չէղնի, բառնա զուր բեռներ, էրթա։

Վազիր-նազիր վազեց գնաց, ասեց.— Տղա, քու աղեն օր հ'ելավ քնուց, ասե՝ զքզիկ թագավոր կկանչե։

Մշակն ասեց.— Շատ աղեկ։

Վազիր-նազիր թողեց գնաց։

Տղեն հ'ելավ քնուց, լվացվավ, էկավ նստավ զուր ճղարեն քաշեց։ Ջխահվեն խմեց, մշակն ասեց.—Աղա, զքզիկ թագավոր կկանչե, էդա տեխ օր էկեր ենք զարկի, թագավորի խաս բաղչեն է էղի, էդա լե ուր քոշքն է։

Տղեն հ'ելավ, էկավ։ Հ'ելավ վի, տեսավ օր էդա ուր հ'օդեն է, գնաց բացեց զուր հ'օդի դուռ, մտավ ներս։

Օր մտավ ներս, միտկ հ'ընկավ թագավորն ու ուր կնիկ, տփվավ ու լաց։ Էլ չըն կառնա հանեն կանկըցուն օտաց։

Դացին թագավորին ասին.— Թագավոր ապրած, չասիս օր էդ տղեն ծուռըմ էղի, մենք կանչինք, ասինք՝ զքզիկ թաքավոր կկանչե։ Էկեր է գացի ֆլան հ'օդեն կտփվի ու կիլա։

Թագավորն ասեց.— Գացեք, կանչեք թըղ հ'իգա, տեսնամ էդ մարդ հ'որի՞ն է գացի, մտի էդ հ'օդեն ու կիլա, սապապ ի՞նչ է։

Գացին զմարդն զորով հանին կանկըցուցին վըր ուր օտաց, զաչքեր սրբըցուցին ու առան էկան։

Էկավ բարև տվեց, առավ զուր բարև, տեխ ցուցուցին, հ'ընցավ նստավ։

Թագավոր օր զտղեն տեսավ, խելք գլխեն գնաց, օսկու պես կփիլեր։

Ասեց.— Իմ ախչկա խարճն օր կա՝ էդա տղեն է։

— Բըլե տղա, դու զէն մ՝ ասի, հ'որի՞ն կիլեր։

Տղեն պատմեց.— Թե ես անդամալուծըմ ենք, թագավորն ու ուր կնիկ բերած են կպահեն, էդա իմ հ'օդեն էր, էնոկի կիլենք։

Բ՚ագավորն նոր վիրուց ասեց.— Օղորդ օր ասած ին՝ գրուկ չավիրի։

Բերեց զախչիկ պսակեց տղի վրեն ու ուր տեխ նստրցուց վըր Թախտին, ինք հալվորցեր էր։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իջավ իրեկ խնձոր, մեկ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։